

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ

«Միասին Երուսաղեմի մէջ» քննարանն էին ընտրած կազմակերպիչները Սէյնթ-Էնիտիօ Կաթոլիկ աշխարհական Գրիստոնեաներէ կազմուած ընկերութեան, իրենց կազմակերպած ռաբբորոյ Համագումարին համար, որ տեղի ունեցաւ 1995 Օգոստոս 29-30 երկու օրերուն, Երուսաղեմի Հայ Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ։ Հրահրուած էին Գրիստոնեայ, Հրեայ եւ Իսլամ կրօնական պետեր, դեկավարներ, մտաւորականներ եւ ներկայացուցիչներ բազմաթիւ երկիրներէ։ Բացման եւ փակման նիստերը տեղի ունեցան Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, իսկ երկրորդ օրուան առաւօտեան նիստը Նօթրը Տամին մէջ։ Ըստ նախապէս եղած համաձայնութեան, փակման նիստի աւարտին, Ժառանգաւորաց Վարժարանի պարտէզին մէջ ձիթենիի երեք ծառեր տնկուեցան, երեք աստուածապետական կրօններու անունով իրրեւ խորհրդանշիչ համաշխարհային խաղաղութեան եւ համագոյակցութեան։

Օգոստոս 29ի առաւօտեան առաջին նիստին, բացման խօսքով «Բարի Գալուստ» մաղթեց Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանը։ Ստորեւ՝ Անգլերէն ուղերձին հայերէն թարգմանութիւնը.---

Ամենապատիւ, Բարձրաշնորհ եւ Գերաշնորհ Ներայրներ, Վսեմաշուք Դեսպաններ եւ Հիպատոսներ, Միաբանութեանց Հոգեշնորհ Ներկայացուցիչներ, Աշխարհիկ եւ Հոգեւոր Հիմնարկներու Պատուարժան Գործավարներ եւ Առաջնորդներ, Տիկնայի եւ Տեառք, Հաւատացեալ Ներայրներ եւ Բոյրեր։

Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւնը ինքզինքն առանձնաշնորհեալ կը նկատէ խիստ նշանակալից համագումարի մը համար հանդիսակալը ընտրուած լինելով։ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կողմէ, եւ յանուն

մեր բոլոր Գրիստոնեայ եղբայրներուն, ի մասնաւորի Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամենապատիւ Տիտոտրոս Պատրիարքին, Լատինաց Ամենապատիւ Միշէլ Սապպահ Պատրիարքին եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան Գերաշնորհ Գաւաթոսին, հայերէն լեզուով՝ մեր Սուրբ Բաղադը «բարի եկեր էք» կ'ըսեմք։

Պատմական օր մըն է այս մէկը ոչ միայն Երուսաղեմի, այլ միաժամանակ աշխարհի խաղաղասէր բոլոր ազգերուն համար։

Սոյն բարեբաւտիկ առիթով, բարեհաժար իրականամարին ներքեւ մեր սիրելի Հաղաքին, որ աշխարհի գլխաւոր կրօններէն երեքին՝ Գրիստոնեութեան, Իսլամի եւ Մովսիսականութեան օճախը կը հանդիսանայ, մեր միտքերուն մէջ մէկ խորհուրդ, եւ մեր սրտերուն մէջ մէկ յայտնաբերում միայն տիրել-- ծառայութիւն մարդկային դատին իրաւունքներուն։

Ահաւսիկ այստեղ ի մի եկած ենք, Գրիստոնեաներ, Իսլամներ եւ Յուդայականներ, երկրագունտի բոլոր ծագերէն հաւատացեալներու հետ մեր ձեռքերն միացնելու ակնկալութեամբ, ոչ միայն խորհրդակցելու պատրաստակամութեամբ այն քիւրաւոր հարցերուն մասին, որոնք խոտկայոյց համակած են աշխարհի ժողովուրդները, այլ նաեւ հաստատականութեամբ որոնելու անոնց կարելի լուծումները։

Ձեզմէ շատեր երկար նախապարհ կտրած էք այստեղ ժամանելու համար, բազում դժուարութիւններ յանձն առած էք՝ խաղաղութեան եւ արդարութեան դատին քերելու նպատքը ձեր դաւանմաններուն եւ հաստատութիւններուն, անոնց միացեալ եւ իմաստուն եղբայրամեկտեղութեամբ։

Մարդկութեան համար աւելի նախընտրելի համակարգի մը անտարբերները սաւառնիլ սկսած են մեր փոքր եւ տառապեալ երկրագունտին վերեւ։ Խաղաղութեան պտուղները համոտեսիլ սկսած ենք արդէն մեր տարածաշրջանին մէջ եւ ամէն օր ակամատեսները կը դառնանք անհատնում ջանքերուն այն քարեացակամ արանց եւ կանանց, որոնք իրենց կեանքներն ի սպաս

դրած են մարդկութեան ծառայութեան:

Կը թախանձեմք ձեզ լինիլ քաջ եւ խորագէտ ձեր խորհրդածութեանց եւ քննարկմանց մէջ: Ձեր բոլոր մախա-
ձեռնութիւնները թող յայտնաբերեն աշխարհին,
որ մարդիկ կարող են միաբանիլ, որ ամէնքս
եղբայրներ եւ քոյրեր ենք ընդ արեգակամբ,
եւ թէ կը պատկանինք մեծ ընտանիքի մը, եւ
կարելի է մինչեւ իսկ ներել եւ սիրել
թշնամիները: Եւ այս ամէնը կարելի կը
դառնայ միայն երբ ուղիղ կերպով ըմբռնենք
այս բոլորը, եւ ուղղամտօրէն հետեւինք
անձնց, եւ կիրարկենք զանոնք ըստ
իմաստութեան Արարչին Տիեզերաց,
Ամենակալին, Շնորհադին եւ Ողորմածին,
որուն առջեւ ամենքս ալ կ'երկրպագենք եւ
որուն անունով միշտ կը խօսինք եւ կը
վկայենք:

Կը թախանձեմք ձեզ ցոյց տալ աշխարհին,
որ հակառակ մեր գործածած տարբեր
լեզուներուն, մեր խօսքը մէկ է, եւ մեր յոյսը
մէկ:— Խաղաղութիւն եւ եղբայրութիւն, սէր եւ
փոխըմբռնում:

Երբ մէկ կողմէն հազար հազարաւոր
մարդիկ կը տառապին չճատրութեան եւ
տգիտութեան լուծին ճնշման տակ, կամ
կ'անհետանան կոտորուելով ախտերէն,
անստաղծութենէ կամ քաղաքական

հալածանքներէ, կը խնդրենք, որ աշխարհի
խիղճն արթնցնէ, որպէս զի տեսնեն մարդկային
իրաւունքներու անդադրում ոտնակոխումը:

Կը խնդրենք, որ ձեր երկիրներու
պետութեանց մօտ շեշտէք անհրաժեշտութիւնը
զինաթափութեան, խաղաղ համակեցութեան
եւ մաքուր աշխարհի մը երաշխիքին:

Արդարեւ, այս մէկը մեր երկրագունտն
է, եւ մեր տունը — ուրիշ չունինք: Եթէ յամա-
ռինք զայն ապականելու եւ կործանելու, այն
ատեն պիտի կորսնցնենք մեր տունը եւ մեր
յոյսը:

Ուստի, լաւ մտածեմք. ի՞նչպիսի աշխարհ
մը պիտի ժառանգեն մեզմէ մեր որդիները:
Ի՞նչպիսի կտակ պիտի թողունք իրենց:

Թող սոյն ռուսիայի եւ խիստ կարեւոր
հանդիպումը սատարէ փոխըմբռնման նոր
կամուրջներ շինելու աշխարհի զանազան
ժողովուրդներու միջեւ, եւ թող խաղաղութիւնը
տիրէ վրդովեալ մեր երկրագունտին բոլոր
անկիւններուն:

Թող Աստուածն ամենակալ, եւ ողորմած
ու մարդասէր Ալլահը, եւ տիեզերքի արարիչ
Սեռվան՝ իր շնորհաբաշխ օրհնութիւնները
տարածէ մեր բոլորին վրայ: Ամէն: